# ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

## ՀՐԱՄԱՆ

16 08 2018 թվականի N 104-Ա

### ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N 75-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով և 37-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Հաստատել Ջրային կոմիտեում քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Ջրային կոմիտեում քաղաքացիների ընդունելության գրանցման նպատակով սահմանել (010) 54.06.13 հեռախոսահամարը:

3.Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի ապրիլի 27-ի <<Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեում քաղաքացիների ընդունելության կարգը սահմանելու մասին>> N 75-Ա հրամանը:

ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ԻՆԵՍՍԱ ԳԱԲԱՅԱՆ

2018թ. ------------- ------

Երևան

Expired certificate

X

ԻՆԵՍՍԱ ԳԱԲԱՅԱՆ
Ջրային կոմիտեի նախագահ
Signed by: GABAYAN INESSA 5307570201